Կարմրաշեն

Բնակչության թիվը՝ 255

Կարմրաշեն (նախկինում՝ Քյոթանլի, Քյոթանլու) գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող Վայոց լեռան ստորոտում, Հերհեր գետի վերին հոսանքի բարձրադիր սարավանդում։ Ծովի մակարդակից բարձր է 2060 մ։ Սահմանակից է՝ հյուսիս-արևելքից՝ Ջերմուկ, հարավ-արևելքից՝ Հերհեր, հարավ-արևմուտքից՝ Մալիշկա, հյուսիս-արևմուտքից՝ Գողթանիկ համայնքներին։ Շրջակայքում կան անտառակներ:

Մոտակայքում գտնվող հրաբխային խարամներն օգտագործվում են որպես շինարարական ավազ։ Տեղանքը քամոտ է:

Գյուղի հիմնադրման տարեթիվը ստույգ չէ։ Գյուղի շրջակայքում կան հնավայրեր և պատմաճարտարապետական կոթողներ։ Գյուղից մեկ կմ հարավ-արևելք գտնվում է Պողոս-Պետրոս խաչքարը, հարավ –արևմուտքում խարաբաներ գյուղատեղին է, հյուսիս-արևմուտքում՝ Գենգարա գյուղատեղին:

Խաչքարերը վերաբերում են 10-13րդ դարերին։ Ղևոնդ Ալիշանը Կարմրաշենին է նույնացնում Սյունիք աշխարհի Վայոց Ձոր գավառում հիշատակվող Գուտենի գյուղը։ 1963 թ այստեղ հիմնվել էր բանավան՝ Արփա-Սևան ջրատարի բանվոր-ծառայողների համար։

Այժմյան գյուղի տարածքը բնակեցվել է 1916 թ-ից 1925 թ-ն Նախիջևանի Բաղամլու գյուղից ներգաղթածներով, ինչպես նաև Գնդեվազից, Վերնաշենից և այլ վայրերից եկածներով:

Նույն շրջանում հարևան տարածքներից Կարմրաշեն են տեղափոխվել նաև ադրբեջանցիներ:

1988 թ-ին գյուղի ադրբեջանցի բնակչությունը տեղափոխվեց Ադրբեջան, իսկ նրանց փոխարեն գյուղ ներգաղթեցին մեծ թվով ադրբեջանահայեր, որոնց մեծ մասը հետագա տարիներին տեղափոխվեց այլ բնակավայրեր:

ՀՀ անկախությունից հետո գյուղի երիտասարդության նախաձեռնությամբ տեղանունները, որոնք ունեին թուրք-արաբա-պարսկական ծագում, վերանվանվեցին Կարմրաշենցի ճանաչված և նշանավոր մարդկանց անուններով. այդ վայրերում կառուցվեցին հուշաղբույրներ:

2001 թ-ի մարդահամարի տվյալներով գյուղում բնակվել է 318 մարդ, 2010 թ-ի տվյալներով՝ 289 մարդ։

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, ինչպես նաև հացահատիկների և կերային կուլտուրաների մշակությամբ:

Գյուղն ունի դպրոց, ակումբ, գրադարան, հեռախոսային ցանց, բուժկետ, խանութ: